

ԱՄԱՆՈՐԸ ԵՎ Ս. ՇՆՈՒՆԴԸ ՎՃԶԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՅՈՒՄ

Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցը սույն թվականի հունվարի 13-ին, մեր Տիր Դիտու Քրիստոսի Անվանակոչության տոնի օրը, ավանդույթի համաձայն մեծաշուր հանդիսավորությամբ նշեց Ամանորը և Ս. Շնունդ՝ քարձոր նախազահությամբ Գերաշնորհ Տ. Սեպուհ Եպիսկոպոս Չուշյանի, մասնակցությամբ Հոգեշնորհ Տ. Սիոն Վարդապետ Աղամյանի, Տ. Արշեն արքու Սանոսյանի, Տ. Ղուկաս աքնդա Զարարյանի, տեսչական ու դասախոսական կազմի, Գևորգյան Հոգևոր ճեմարանի մի խումբ սաների, այլ հյուրերի և դպրանոցի ողջ ուսանողության:

Սույր և կենարար Պարարագի արարողությունից հետո դպրանոցի հանդիսությունների սրահում ցերեկույթն սկսվեց Տերունական աղոթքով, Հանրապետության հիմնով և դպրանոցի օրինագործվ՝ կապարմամբ դպրանոցի քառածայն երգչախմբի:

Հանդիսության բացման խորհրդական խորքով հանդես եկավ դպրանոցի գլուխություն Հոգեշնորհ Տ. Բագրատ աքնդա Գալստյանը.

«Հոգևոր եղբայրներ, սիրենի դասախոսներ, շատ սիրելի սաներ և հյուրեր.

Սիավասիկ կանգնած ենք նոր հազարամյակի սեմին, մեր Եկեղեցու 1700-ամյա կյանքի և մեր Տիրոջ՝ Դիտու Քրիստոսի Բեթղեհեմյան մսուրում գեղի ունեցած հրաշալի Ծննդյան ավելիքը ևս մեկ անգամ ունկնդրենու ոժականություն, հույս և ներշնչանքին կենսավորում հաղորդող անփոփոխելի իրադարձության առջև։ Միայն ունկնդրությունը, սակայն, գեղարվեստական ներկայացումների միջոցով այդ հեղափոխիչ դեպքի հիշեցումն ու վերիշումը բավարար չեն մտնելու Քրիստոսի խորհրդի մեջ և ըմբռնելու այն։

Կսիրակ պատգամ է փրկած մեզ «Երկրություն խաղաղություն և մարդկանց մեջ հաճություն» սերմանելու Գործ։ Սա է իրականն ու վավերականը. եթե այն բացակա է մեր կյանքից, որեմն ավանդ և ապարդյուն են անցել մեր կյանքի օրերը։ Այն քաղցրություն, հավաքքի անսասանություն և վերջապես սիրու արտահայտություն ունեցած առաքելության հանդեպ, որի սկիզբը և վերջը համագործակցությունն է Ասպծու հետ։ Ամբողջ Ս. Գիրքը մարդու և Ասպծու համագործակցության պարմությունն է՝ մարդն իր աշխարհու և ձգտումով դեպի վերադարձ իր նախանկյալ վիճակին, համագործակցում է Ասպծու և նրա շնորհի հետ։ Այս իմաստով է ասպամուխին Պողոսը շնչում, թե «քոյլորից ավելի աշխարեցի, բայց ոչ թե ես, այլ Ասպծու շնորհը, որ ինձ հետ եք» (Ա Կորնթ. ԺԵ 10): Նա նշում է Ասպծու դերը և իմաստը իր կյանքում Տիրոջ շնորհի հետ և մեզ համագործակից լինելու առարկայականությունը։ Այն չի ենթադրում կրավերական վիճակ, Ասպծու շնորհի գործունեության համար դաշտ ապահովելու նպատակով, այլ, ճիշդ հակառակը, գործել ծայրագույն ասդիմանով,

մեկնակեսք ունենալով շնորհն արծարծելու և Ասրծու կամքը կարարելու նախանձախնդրությունը, որը մարդուն բարձրացնում է մի վեճ գիրակցության, ըստ որի «Անենք Ասրծու գործակիցն ենք, Ասրծու այզին ենք, Ասրծու կառույցն ենք» (Ա Կորնթ. Գ 9): Այս սկզբունքն է եղել մեր գործունեության առանցքը Ամենայն Հայոց Հայրապետ, Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Վեհափառի կողմից սույն թվականի օգոստոսի 1-ին Սևանի Վազգենյան Դպրանոցի տեսուչ նշանակվելու ի վեր:

«Ամագործակիցներ Ասրծու ենք. այս է մեր խորքային առաջնորդող որպես գիտություն և ուսանողություն, մեր ուսումնակրթական, հոգևոր, կրոնական, աղոթական կյանքի, մեր ապագայի իրականացնելիք ծրագրերի հիմքում: Այս գիրակցությունը խրացված արդահայրել ենք երեք բառերի միջոցով, որոնք փակցված են ուսանողական ննջարանային բաժնի ներքին ճակարտին:

«Խնձնառություն, Պատրախանագվություն, Նախանձախնդրություն:

Այսպես ենք սկսել մեր կյանքը, այսպես ենք ցանկանում դիմավորել նոր հազարամյակը, մեր ազգի մկրտության և քրիստոնեության որպես ախտական կրոն հոչակման 1700-ամյակը և մեր Տեր Հիւսոս Քրիստոսի մարդեղացման խորհուրդը:

«Ուսկ, իմ սրբի խորքից շնորհավորանքի և շնորհակալության խոսք ևմ ուղղում մեր դասախոսական կազմին, ովքեր առանց նշոյլ իսկ գարպամսելու և երկմտելու, դպրանոցի սպեղծման առաջին օրվանից ևեթ եկել են դպրանոց, սիրով, հավաքրով, գորգուրանքով լցրել այս պատերը՝ իրենց վասրակը, բաղանդը, շնորհները փոխանցելով մեր ուսանողությանը:

Իմ շնորհավորանքը և շնորհակալությունը նաև մասնավորապես այս դպրի Վազգենյան Դպրանոց հաճախող հոգևորականներին և նրանց, ովքեր աղոթքով, սիրով և իրենց մշտական ներկայությամբ կանգնած են եղել այս դպրանոցի կողքին:

Եվ գալիս եմ բոլորի սրբի խորքերից որպես մի ծաղկենիոնց հավաքելու և մեր շնորհավորանքն ու երախսրագիւղությունը ընծայելու Ամենայն Հայոց Հայրապետին՝ այս դպրանոցի հիմնադրին: Թող Ասրված իր մականը անսասան և ծաղկյալ պահի, և մենք է, որպես դպրանոցի սաներ, իր երազներն ու դեսիլք՝ վերաբերյալ այս դպրանոցին և այս դպրանոցի միջից դուրս եկող մեր Եկեղեցու կյանքին, կենսավորենք մեր գործի, մեր հանձնառության, մեր սիրով միջոցով:

«Շնորհավոր Նոր դպրի և Սուրբ Ծննդու»:

Տեսուչ Հայ Սուրբի խոսքին ենթաւեցին «Ով զարմանալի», «Այսօր ձայնն հայրական» Ծննդյան հոգեզմայլ շարականները՝ ընդմիջարկվելով Ղոկասի Ավետարանի՝ Քրիստոսի ծննդյանը վերաբերող հարվածով: Պարույր Սևանի «Դիմում եմ պահանջելու պես» սքանչելի բանասրեղծության արդասանությամբ հանդես եկավ Բլարանի սան Նմայակ դպիր Մանուկյանը, որից հետո երգչախումբը կարարեց «Առաօտ լուսաբեր» երգը:

«Խնձուն ուսանողության իր սրբի երախսրագիւղության ու շնորհավորական խոսքը ներկաներին ուղղեց Ե լսարանի սան Վազգեն սարկավագ Շիրվանյանը.

«Գերաշնորհ Սրբազն Հայր, Նոգեշնորհ և Արձանապարիկ Հայրեր, հարգելի դասախոսներ և սիրելի ներկաներ ու սաներ.

Այսօր ինձ համար միաժամանակ ծանր ու քաղցր պարբականություն է ողջ ուսանողության անոնից խոսք ասել:

Մեզ համար հունվարի 13-ը՝ Տիրոջ Անվանակոչության փոնը, ավանդական ու ամենասիրեկի օրերից մեկն է: Այս ժամանակահավաքը ոչ միայն դարձել է դասավանդվոր առարկաների մի քննաշրջան, այլև հարկացիս հաշվեդպության, խոճի ու Ասգծո առջև հաշվեկոր լինելու մի շրջան:

Անցած տարին, մանավանդ դրա վերջին ամիսները, բուռն ու ժամանակային առումով շարք կարևոր էին դպրանոցի համար: Նոր գետակ Հայր Սուրբի գլխավորությամբ կազմակորվեց բազմածայն երգչախումբ, նշվեց դպրանոցի 10-ամյա հորենյանը, ուսանողների մի մասը լծվեց Սևան քաղաքի դպրոցներում դասավանդելու գործին:

Նոր՝ 2001 թվականն արժնություն և մեզ համար առավել կարևոր է դառնում քրիստոնեության՝ որպես պետքական կրոն հոչակման 1700-ամյակի կապակցությամբ: Այս տարի մենք ոչ միայն պիտի նշենք, վերիշենք ու փոնի վերածենք այն, այլև մեզ ընձեռված ատիքը լավագույնս օգբագործենք, որպեսզի այն դառնա մեր ազգի համար վերածննի վերազարթոնքի ու նորոգության տարի: Եվ ինչպես Պողոս առաջյան է ասում, «Նորոգվենք մեր մոքի նորոգությամբ, որպեսզի կարողանանք քննել լավը և իմանալ, թե ինչ է Ասգծո կամքը, այսինքն՝ բարին, հաճնին ու կափարյալը: Միայն մոքի լոյսով և հոգու զորությամբ կարող ենք իմաստալից դարձնել մեր կյանքը և երջանկացնել մեր ժողովրդին: Սակայն ամենից առաջ մեր մոքերն ու հոգիները պիտի լուսավորվեն ու պարուրվեն Ասգվածային լոյսով՝ Քրիստոսով, առանց որի չկա կյանք, չկա երջանկություն, չկա երանություն...»

Հավաքը Ասգծո հանդեպ, նվիրվածությունը հայկացյան ազգին, հայրենիքին ու լուսավորչահասքափ Սուրբ Եկեղեցուն և սերը միմյանց նկարմամբ դարձնենք մեզ համար սուրբ երրորդություն, որին եեցնելով միայն այս նոր դարաշրջանում արծվաթոիչ կրթածներ երկնակամարում և ոնայ ու մշտամնա իրականություն կդառնա սիրելի Հայր Սուրբի այն խոսքը, որ Սևանում արձիվներ են մեծանում:

Ամփոփելով խոսք՝ ուզում եմ շնորհավորել Վեհափառ Հայրապետի Նոր տարին և Ս. Շնունդը, մաղթել նրան արևշաբություն և քաջառողջություն: Թող նրա լուսավորյան մականը միշտ ծաղկի, և իր սրբազն գլխավորությամբ մեր Եկեղեցին ու ազգը պայծառ օրեր տեսնեն: Շնորհավորում եմ միաբանության բոլոր անդամներին, ցանկանում եմ, որ իրենց կարգի մեջ հասպար մնան և մեզ համար լինեն քաջալերիչ օրինակներ հոգևոր մարդու և հայ հոգևորականի: Շնորհավորում եմ դասախոսական և դեսչական կազմին և շնորհակալություն հայքնում, որ նրանք անձնիք նվիրումով բաշխում են իրենց ունեցած գիրելիքներն ու փորձը: Շնորհավորանք և շնորհակալությունն են հայքնում նաև դպրանոցի ողջ անձնակազմին, որ իր ծնողական վերաբերմունքով ու գորգութանքով շահել է ուսանողության հարգանքն ու սերը»:

Այսուհետեւ երգչախումբը կարարեց «Մարալ, մարալ» ժողովրդական երգը, որին հաջորդեցին Եղիշե Չարենցի «Կուզեմ իիմի փիշ զուռնեն» և Վաշագան Շովհաննիսիանի «Սեր կոթողները» բանասրբեղծությունները՝ Դ լսարանի սան Վահե դպիր Կարապետյանի և Ա լսարանի սան Հայկ Հարությունյանի գեղեցիկ արքասանությամբ:

Ողջ դասախոսության անունից շնորհավորանքի խորով հանդես եկավ դպրանցի դասախոս Խորեն Պալյանը.

«Արքազան Հայր, Շոգեշնորի և Արժանապարիվ Հայրեր, սիրելի հյուրեր ու դասախոսներ և շատ սիրելի սաներ.

Ինձ համար մեծ պարփիվ է այսօր մի քանի խոսք ասել հանուն Գևորգյան Շոգևոր Ճեմարանի և Վազգենյան Դպրանոցի դասախոսական կազմի և շնորհավորել նախ ձեր Ամանորը՝ իին տոմարով, և ապա Ջրիսվոսի Դրաշափառ Ծնունդը: Արդին 5-րդ, թե 6-րդ դպրին է, ինչ ես մեծ հաճույքով զախի եմ Սևանա Դպրանոց: «Տոնձք բազումք են եւ մշակը՝ սակաւք». սա չի նշանակում, թե մենք ծովին նման մշակներ պետք է աճնցնենք, այլ «մշակ առանց ամօթոյ», որովհետք այսօր, առավել քան երբեք, Հայագանյայց Եկեղեցին կարիք ունի վերանորոգվելու, բուժվելու, վերականգնելու իր վերքերը, լցնելու այն մեծ անջրպեսքը, որ բացվեց կոմունիստական հասարակարգի սրբության օրվանց: Այնքան մեծ էր այդ անջրպեսքը, որ մեր ժողովուրդը օպարգում էր Եկեղեցուց: Եվ մոռագել ենք, որ մենք պետք է գնանք դեպի ժողովուրդը և ոչ թե հակառակը: Միրելի սաներ, երկու բան եմ այսօր ուզում կիրակի ձեզ: Առաջինը, որ դուք լսակ սովորեք և շատ բան սովորեք, և երկրորդը՝ շատ սիրեք Հայաստանյայց Եկեղեցին, Էջմիածինը, ոչ միայն սիրեք, այլև պաշտեք Ս. Էջմիածին՝ որպես մեր առաջին աշխարհամապուտը, իբրև Հայոց Ընդհանրական Հայրապետության կենտրոնը, Ջրիսվոսի կողմից կերպված աշխարհում միակ հրաշակերպ քամարը: Եվ եթե այս սերը ձեր մեջ կարողանաք արմադավորեն, կինեք ամենահայրենասեր մարդիկ, որովհետք Եկեղեցափրությունը, Էջմիածնասիրությունը հավասարազոր են հայրենասիրությանը, և կարծում եմ այդ երկու հասկացությունները ծովվել են արդեն մեր քրիստոնեության ընդունման առաջին մեջ օրվանց:

Թող Աստված զորացնի բոլորիդ, ձեզ հաջողություն և ասդվածային իմաստություն եմ մատյում»:

Սրամիդ կաղանցեքը և վիճակահանությունը ներկաներին թարմություն հաղորդեցին: Ապա հենց «Ամեն շաբաթ կամ կիրակի» երգը: Հանդիսության վերջում օրինության խոսք ասաց Սեպոն Սրբազնը.

«Միրելի հոգևոր եղբայրներ, դասախոսներ և, մանավանդ, շատ սիրելի սաներ.

Իրավես մեծ է հոգևոր հասկապությունների դերը հայ ժողովրդի կյանքում, առավել ևս այս դժվարին ու փորձություններով լի ժամանակահադվածում: Հայ ժողովուրդը աղանդավոր է, անհավագ է, այս է կամ այն է,- այս ամենի մեջ մեր մեջքի մեծագույն բաժինը կա:

Մենք, իբրև Եկեղեցի, ազգ կամ պետքություն, իրավունքը չունենք հայրարժանալու կարարած քայլերով: Զանի դեռ Հայաստանում առկա են աղանդավորական հզոր և լուրջ հոսանքներ, որոնց թիկունքին կանգնած են ոչ միայն օպար, այլև, դժբախ-

փարար, հայրենի զավակներ, ազգն ազգ չի դառնա, և Եկեղեցին՝ Եկեղեցի: Դարձալ մենք ենք մեղավոր, մենք ե, որ, իբրև Եկեղեցի, պետք է զորանանք, գիրակցնեք մեր առաքելությունը: Ուրախ եմ, որ Վազգենյան Դպրանոցն այդ առաքելության իրականացման ճանապարհին է:

Սիրելի սաներ.

Ճավոր, Հայ Եկաղեցին պարմության շափ քիչ փուլերում է ընդհանրական մրածեկերպ և զործեկերպ ունեցել: Առավելաբար անհափներն են Հայ Եկեղեցին, իբրև փրկարար նավ, առաջնորդել ու նավարկել: Բայց մենք ուղղակի իրավունք չունենք այդ կերպ շարունակելու. մենք, իբրև միարաներ, պետք է զործենք՝ որպես Գևորգյան, Վազգենյան, Շիրակի ճեմարաններ և համախմբված ու միասնական գործունեությամբ: Մենք, իբրև Եկեղեցի, ամուր կառչած մեր պապերի հավաքրին, Վեհափառ Հայրապետին, մեր առաջնորդներին, մեկ շունչ, մեկ մարմին, մեկ բռունքը դարձած՝ հասնենք մեր ժողովրդին՝ հանուն նրա բարօրության և հավաքրով մեկ լինելու զաղակարախոսության: Սա մեր սեպուի պարտքն ու պարտականությունն է: Այս Եկեղեցին չի ընդունում անօրենություն, սրբապղծություն, այս Եկեղեցին սիրում է նվիրյալների, Քրիստոսի հեքինորդներին՝ հավաքարիմ Տիրոջ Ավելուարանին:

Հայր Սուրբ, շնորհակալ եմ այս երավերի համար: Ի սրբն շնորհավորում եմ ձեր Ամանորը և Ս. Շնունդը և մայորում եմ ուժ, կարողություն՝ փոխբեսուչների հետ ձեռք ծնողի դպած շարունակելու պարախանագործությունը և սրբազն պարտականության իրագործումն այս դժվարին պայմաններում:

Սիրելի՝ դասախոսներ, շնորհավորում եմ նաև ձեր Ամանորը և Ս. Շնունդը: Իրոք շաբ դժվար է, երկար ճանապարհ եք կրրում, գալիս Սևան և ուսանողներին ձեր գիրքելիքները փոխանցում: Դա հմուտ վարպետի ձեռքի գործ է: Եթե նրանք կավ են, հումք, ապա դուք վարպետներն եք, որ ձեռք եք բալիս և հանրությանը ներկայացնում ձեր պատուին ու արգասիքը:

Սևանի Վազգենյան Դպրանոցի կենացը՝ իր հիմնադրի՝ Գարեգին Վեհափառի զիշավորությամբ:

Շնորհավոր Ամանոր և Ս. Շնունդ:

«Էջ Սիածինն ի Ռոբ» շարականի երգեցողությամբ և Սրբազն Հոր «Պահպանից»-ով եղբակակվեց Ամանորի և Ս. Շնոնյան համուխությունը Վազգենյան Դպրանոցում:

**ՎԱԶԻԿ ՈՒՐԱՐԱԿԻՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ
ՄՆԿՐԱՆԻԿ ՈՒՐԱՐԱԿԻՐ ՊՈՂՈՍՅԱՆ
ՍԼԱՄԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՆԳԱԿՐ ԴՊՐԱՆՈՑԻ
Ե ԼԱԱՐԱՆԻ ՍԱՆԵՐ**